ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - 041301.00.7 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ - 041301.17.7 « ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ »
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ - ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

ՎԱՆԱՁՈՐ 2024

1. **Մագիստրոսական Կրթական ծրագրի անվանումը**

Հանրային կառավարում

2.1. ՈԱՇ-ի մակարդակ

Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ

2.2. Որակավորման աստիճան

Հանրային կառավարման մագիստրոս

2.3. Կրեդիտների քանակը

90

3. Բուհ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

4. Ֆակուլտետ

Հասարակական գիտությունների

5. Ամբիոն

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման

6. Ուսուցման լեզու

Հայերեն

7. Ուսուցման ձևը

Առկա

8. Արտոնագրում

Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա Ա № 720Ա/2, 18.05. 2023թ.), մասնագիտության ծածկագիրն է՝ 041301.00.7.:

041301.00.7«Հանրային կառավարում» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ. 03. 31-ի 85 որոշմամբ:

9. ԿԾ-ի մուտքի պայմաններ

«Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բարձրագույն կրթության վկայական և հաջողությամբ հանձնած լինի քննություններ «Տնտեսագիտություն», «Կառավարում», «Իրավագիտություն», «Օտար լեզու», առարկաներից:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

Մագիստրոսի ԿԾ-ի ուսուցման նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում 1.5 տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 90 ECTS կրեդիտ է՝ կիսամյակային 30 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ)::

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

I. Ընդհանուր դասընթացներ (6 կրեդիտ),
II. Մասնագիտական պարտադիր դասընթացներ (53 կրեդիտ)
III. Գիտահետազոտական կրթամաս (31 կրեդիտ):

11.Ծրագրի նպատակը

Ծրագիրը նպատակաուղղված է պատրաստելու «Հանրային կառավարում» մասնագիտությամբ որակավորում ունեցող կադրեր՝ ձևավորելով շրջանավարտների մոտ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանող անհրաժեշտ կոմպետենցիաներ՝ հանրային կառավարման, տնտեսագիտության, քաղաքագիտության, ինչպես նաև այլ հարակից բնագավառներում աշխատանքային գործունեություն ծավալելու համար:

Ծրագրի նպատակներն են՝

- հանրային կառավարման, տնտեսագիտական, քաղաքագիտական, իրավագիտական բնագավառի գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմքերի խորացված ուսումնասիրության կազմակերպում,
- հանրային կառավարման ոլորտում գիտականորեն հիմնավորված ինքնուրույն գործնական և գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորում,
- ուսանողների մոտ ինքնաքննադատության, ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտության ձևավորում:

Կրթության բնագավառում ծրագիրը կօգնի.

- Ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ՝ տնտեսության, հանրային կառավարման, հանրային ծառայության համակարգի կատարելագործման, պետական և մունիցիպալ կառավարման ռազմավարություն-ների վերաբերյալ, ինչպես նաև գիտական կանխատեսման, վերլուծության, վերահսկողության իրականացման, պետական կառավարման արդյունավետության միջոցների և մեթոդների ներդրման միջոցով նպաստել հանրային կառավարման արդյունավետության բարձրացմանը,
- Ստացած գիտելիքները օգտագործել հանրային կառավարման և տնտեսության պետական կարգավորման գործընթացներում, նպաստել պետական և ՏԻՄ զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմանը:

12. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

041301.17.7 «Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտը, ելնելով մասնագիտական գործունեության վերջնարդյունքներից, պետք է ունենա.

Գիտելիք

1. **Գիտելիք և իմացություն**

- Դրսևորում է հանրային կառավարման հարակից ոլորտների ժամանակակից տեսությունների, հասկացությունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների խորքային իմացություն:
- Ցուցաբերում է խոր մասնագիտացված գիտելիք, այդ թվում՝ հանրային կառավարման ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որոնք կիրառելի են դասավանդման, ուսումնառության, հետազոտության, ինչպես նաև գործնական կառավարչական աշխատանքի ընթացքում:
- Դրսևորում է գիտական հետազոտությունների, ինչպես նաև դասավանդման մեթոդների և դրանց առնչվող տեսությունների և ժամանակակից մոտեցումների գիտելիք և իմացություն:

Հմտություններ

1. **Գիտելիքի և իմացության կիրառում**

- Կարող է մշակել մասնագիտական կառավարչական գործունեության առաջանցիկ միջոցներ և նոր գործիքակազմ, որոնք համապատասխանում են առկա իրավիճակին և խնդիրներին:
- Կարող է բացահայտել և ձևակերպել հանրային կառավարման ոլորտում գիտական հիմնախնդիրներ, ամփոփել և քննադատորեն գնահատել ընտրված թեմաներով տեղական և միջազգային հետազոտողների ստացած արդյունքները, ձևավորել գիտական հիպոթեզներ:
- Կարող է վերլուծել գիտական հաշվարկների արդյունքները և հիմնավորել ստացված եզրահանգումները՝ հանրային կառավարման ոլորտում սահմանված գիտահետազոտական խնդրին համապատասխան:
- Կարող է մշակել կորպորատիվ, գործառական կամ ոլորտային ռազմավարություններ:
- Կարող է կազմակերպել և իրագործել նախագծեր ու միջոցառումներ, որոնք ուղղված են մշակված ռազմավարության իրագործմանը:
- Կարող է կիրառել կառավարչական նորագույն կառուցակարգեր, դրանք հարմարեցնել ձևավորված իրավիճակին կամ մշակել նորերը՝ ուղղված հանրային կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:
- Կարող է հայտնաբերել և գնահատել նոր (շուկայական) հնարավորություններ, ձևավորել նորարական գաղափարներ և մշակել դրանց իրագործմանն ուղղված համապատասխան ծրագրային փաթեթներ:

2. **Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ**

- Կարող է վերլուծել և գնահատել կոնկրետ իրավիճակում կառավարչական գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվության ամբողջականությունը և միջոցներ կիրառել այն ապահովելու ուղղությամբ:
- Կարող է վերհանել հանրային կառավարման ոլորտում գիտահետազոտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տվյալները և հավաքագրել դրանք՝ արդյունավետորեն համադրելով առաջնային և երկրորդային աղբյուրները:
- Կարող է ընտրել և համապատասխանեցնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտ գործիքակազմը նախապես սահմանված կառավարչական և գիտահետազոտական խնդիրներին:

3. **Ընդհանրական, իմացական կարողություններ, (ներառյալ դատողություններ անելը)**

- Ունակ է գնահատելու ու կատարելագործելու գիտական հետազոտության առկա մեթոդները՝ հետազոտական կոնկրետ խնդիրներ լուծելու նպատակով:
- Ունակ է զբաղվելու մասնագիտական, ինչպես նաև գիտահետազոտական գործունեությամբ միջազգային միջավայրում:
- Կարող է ներկայացնել կատարված հետազոտության արդյունքները հաշվետվության, հոդվածի կամ զեկույցի ձևով:
- Նեղ մասնագիտական գիտելիքների բնութագիր:

Կարողություններ

1. **Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)**

- Կարող է ընդունել կառավարչական որոշումներ՝ ստանձնելով և կրելով դրանց արդյունքների նկատմամբ պատասխանատվությունը:
- Ունակ է զբաղվելու մասնագիտական կառավարչական գործունեությամբ՝ առաջնորդվելով սոցիալական պատասխանատվության սկզբունքներով:

041301.17.7 «Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտը, ելնելով մասնագիտական գործունեության խնդիրներից և հիմնական կրթական ծրագրերի նպատակներից, պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

<u>Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

- հասարակական հարաբերության վերլուծության և համադրման կարողություն,
- կազմակերպչական կարողություն (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում,
- օտար լեզվով հաղորդակցվելու կարողություն,
- տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծություն,
- հանրային կառավարման ոլորտի խնդիրներ լուծելու կարողություն,
- որոշումներ կայացնելու կարողություն,:
- քննադատության և ինքնաքննադատության կարողություն,
- միջանձնային գործնական հմտություններ,
- թիմային աշխատանքի կարողություն,
- գիտելիքները գործնականում կիրառելու հմտություն,
- հետազոտական կարողություն,
- նոր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն,
- ինքնուրույն աշխատելու կարողություն,
- որակը վերահսկելու կարողություն:

Մասնագիտական կոմպետենցիաներ

- հանրային կառավարման խնդիրների և գործընթացների գիտական վերլուծության, մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրների էության բացահայտման հմտություններ
- հանրային կառավարման բնագավառում հիմնական մեթոդների օգտագործման, գիտության մեջ մոդելավորման, տեսական և գիտափորձնական հետազոտության մեթոդները կիրառելու պատրաստվածություն,

- կազմակերպության հակաճգնաժամային ծրագրերի կազման աշխատանքներին մասնակցություն, իրավիճակի հարթման սեփական մոտեցումների առաջադրում
- հանրային կառավարման տարբեր ոլորտներում տնտեսագիտական և իրավագիտական տարբեր մեթոդները գործնականում կիրառելու ունակություններ,
- տնտեսագիտական և իրավագիտական օրենքների օգտագործման ունակություններ,
- նպատակներին հասնելու կարողության ցուցաբերում՝ հաշվի առնելով տնտեսական և իրավական նորմերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, ցուցաբերել նպատակներին հասնելու կարողություն,
- հանրային կառավարման ոլորտում տարբեր տնտեսավարող սուբյեկտների և պետական կառույցների հետ համագործակցության ցուցաբերում, նպաստելով հիմնախնդիրների հարթմանը և դրսևորելով հանդուրժողականություն
- միջանձնային և միջխմբային հարաբերությունների կառավարում՝ իրացնելով օրենքով սահմանված լիազորությունները:

13. Ուսումնառության և դասավանդման մոտեցումներ

Ուսումնառության իրականացման հիմնական ձևերն են.

- դասախոսություններ,
- գործնական պարապմունքներ, սեմինարներ,
- լաբորատոր աշխատանքներ,
- ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, նախագծեր, գործարար խաղեր),
- մասնագիտական և գիտահետազոտական պրակտիկաներ:

14. Գնահատման մեթոդները

Գնահատման մեթոդներն և չափորոշիչներն ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին

- Գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում ուսանողի ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում
- Ինքնուրույն աշխատանքների /անհատական առաջադրանքներ/ հաշվառում և գնահատում
- Դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում

Ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում ՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

15. Մասնագիտական գործունեության ոլորտներ

«Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրատրոսը բուհը ավարտելուց հետո կարող է զբաղեցնել համապատասխան պաշտոն՝

1. Պետական կառավարման հաստատություններում,
2. Մունիցիպալ կառավարման հաստատություններում,
3. Տնտեսվարող տարբեր սուբյեկտներում:

16.Հետագա ուսման հնարավորությունները

«Հանրային կառավարում» մասնագիտությամբ մագիստրատուրայի հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- ասպիրանտուրայում՝ ստանալու գիտությունների թեկնածուի որակավորման աստիճան: